

Ինչ վերաբերում է առաջին պարսկատառ խաղիկին, մենք գրաւ տարրերակը գտանք «Հայ ազգագրութիւն» և բանահյուսութիւն» աշխատութեան մէջ, բանահամար Ա. նաղարյանի կողմից գրի առնված «Էջմիածնի և Աշտարակի բանահյուսութիւնից» բաժնում տեղ գտած խաղիկների շարքում: Միայն թե այս տարրերակը բաղկացած է չորս սողից (պարսկատառը 6 սող է), և առաջին սողը սկսվում է ոչ թե «կրտակաւոր վազեցի», այլ «կտոր-կտոր վարել էմ»: Մտքեր ենթում ենք այդ խաղիկի տարրերակը.

Կտոր-կտոր վարել էմ,
Մի սիրուն աղջիկ հաւել էմ,
Տեսաւ անուշ քնած ա,
Վարդն էրեսին փռած ա՛:

Երկրորդ պարսկատառ խաղիկի ճշգրիտ կրկնաօրինակը կամ որեւէ մօտիկ տարրերակ, ինչպէս Մ. Արեղյանի, այնպես էլ Գ. Հովսեփյանի

2 Ա. Ա. Օ. գ. տ. ու չ. չ. չ. Հայ ազգագրութիւն և բանահյուսութիւն. Երևան, 1978, էջ 119, խաղ. 45:

և մշտնիւրի մօտ չկաւ Սակայն Հայ բանահամարների աշխատութիւններում կան բաղմաթիվ գրի առնված «չանգլուումներ», որտեղ հանդիպում ենք այնպիսի ժողովրդական բաների ու արտահայտութիւնների (փետե-փետե մարդիկ, կամ խոշտոշ աղջիկներ և այլն), որպիսիք գրեւծում ենք նշված պարսկատառ հանքեղ խաղիկներում: Հենց այս ընդհանրութիւններն ու տարրերակներն էլ ներկայացնում են ժողովրդական բանահյուսութեան հետաքրքրութիւնն ու նրանց պատմական աղբերքը:

Կարծում ենք, որ պարսկերեն ձեռագրերում տեղ գտած հայկական ժողովրդական խաղիկների երկու նմուշները ուշագրաւ երևույթ են ուշ շրջանի (1778—1784 թթ.) հայ-պարսկական մշակութային կապերի ու առնչութիւնների պատմութեան մէջ:

Հ. Հ. ՄՈՎՍԻՍՅԱՆ

3. Տե՛ս Մ. Արեղյան. Ժողովրդական խաղիկներ. Երևան, 1940, էջ 268, խաղիկ 1116: Գ. Հովսեփյան. Փշրանքներ ժողովրդական բանահյուսութիւնից. Թիֆլիս, 1892, էջ 72:

ՁԵՌԱԳԻՐ՝ ԳՐՎԱՄ ԱՆԻ ՔԱՂԱՔԻ ԲԵՆԵՆՅ ՎԱՆՔՈՒՐ

Հայկական ձեռագրական վիթխարի ժառանգութեան մէջ Անիում գտնված ձեռագրերը փորը թիվ են կադմում, ուստի նրանցից յուրաքանչյուրը՝ յինի նկարազարդ թե ոչ, ամբողջական, թե մասնատված՝ «տիեզերահաշակ Անի մայրաքաղաքի» երբեմնի ծաղկուն մշակութի մի սրբազան մասունքն է, արժանի ամենամանրամասն ուսումնասիրութեան նման ձեռագրերից է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի № 5554 Ավետարանը, ընդօրինակված Անիի Բենյենյ վանքում¹:

Ձեռագիրը գրված է նուրբ մագաղաթի վրա, 70-նի 278 թերթ (25×18 սմ), երկսյուն գրութեամբ (սյունակ 7,3×5,3 սմ), գրութիւնը՝ բոլորգիր,

1 Ձեռագրացոյցակում Ավետարանի գրութեան վայր է անվանվում Զարեհունի ուխտը (Յուդակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի. Հ. Բ. Երևան, 1970, էջ 132): Սակայն դա ոչ թե ձեռագրի գրութեան վայրն է, այլ այն վանքը, որի համար ընդօրինակվել է սույն Ավետարանը: Ձեռագրի խորաններում եղած հիշատակագրութիւնները թույլ են տալիս ասելու, որ այն գրվել է Անիի Բենյենյ վանքում (Ա. Մաթեոսյան. Նշմարներ Անիի գրութեան և մանրանրկարութեան. — «Բանբեր Մատենադարանի», № 14):

տող՝ 20: Կապը դրոշմազարդ կաշնպատ տախտակ է, աստուրը զարդահարա գործվածք և կանաչ մետաքս: Ավետարանն ամբողջական է, նրա ղեկավարվածական հարգարանքն են կազմում ինը խորանները, համապատասխան էջերում նկարված չորս անվանաթերթերի կիսախորանները, ինչպէս նաև մեծաթիվ լուսանցազարդեր: Ձեռագրում Ավետարանիչների և տներունական պատկերներ չկան: Հիշատակարաններից իմանում ենք, որ Ավետարանի ստացողը ոմն Գրիգորն է, որն էլ այն նվիրել է Զարեհունի ուխտին: «Գրիգոր ստացող սուրբ Ավետարանիս և ամուսին նորին և որդիս նոցին յիշեսցիք ի Քրիստոս: Հնդ նոսին և զՍիմեոն կրաւնալուր պատճառ գործուս և զառաջնորդը սուրբ ուխտիս Զարեհունի վեղիոէ հայր և զՎարդան փակակալ և զհաշատուր գործակից, զՍտեփանոս և զՂուկաս, զՎարոս միայնաւոր և զայլ համարներ միաբանք Սուրբ Նշանիս, որում սուրբ Աւետարանս է խաչի և ընծայ աւանդեալ ի վերադրելոյս»²: Ձեռագրի էջերում կան նաև այլ փոքր հիշատակագրութիւններ (էջ 42բ, 132ա), որ հիշվում է Գրիգորի կողակից Շահումը:

2 Մաշտոցի անվ. Մատենադարան (ՄՄ), ձեռ. № 5554, էջ 278ա:

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում Ավետարանի խորաններում սյուների, երիշների և անգամ վարդյակազարդերի մեջ եղած մակագրությունները, որոնք վերաբերում են ձեռագրի ստեղծման միջավայրին՝ գիրքը պատրաստող, նորոգող և օտարող մարդկանց։ Առաջին խորանում (էջ 1բ) Եվսեբիոսի նամակի խորանահիմքի երիզի վրա գեղին նեոկով գրված է «[եղ]բայրիկ...»։ Հիշատակությունը շարունակվել է հաջորդ՝ դիմացի էջի խորանի համապատասխան մասում, սակայն եղծված է։ Այդ նույն էջում, Եվսեբիոսի նամակի երկրորդ խորանի տառ (էջ 2ա) գրված է Վանական կազմատարի կարհի հիշատակագրությունը՝ «[Յիշես]ջիբ և զՎանական կազմող»³։ Մեկ այլ տեղ (էջ 4ա) խորանի քիվի վրա հունարեն ծածկագիր է (նկ. 1) առաջիմ այն վերծանել չի հաջողվել, իսկ աշակողմյան սյան վրա, վերից վար գրված է «Ծիրացյուլ»։ 6ա էջի խորանի կիսախորանում, կենտրոնական ութաթև վարդյակի թևերին մեկական տառերով, շրջանաձև գրված է «Սիմեոն քհ.»։ Նույն էջում խորանահիմքի երիզի վրա մակագրված է «Յիշես զի վերստին նորոգեաց Աւետարան ի Ընթիւն Տ[ի]րաց[ու]ի»։ Հաջորդ հիշատակությունը (էջ 7ա) խորանահիմքին գրված գաղտնագիրն է, ուր կարդում ենք՝ «Զմիակեցն զՍիմեոն, որ բնակէր յանապատի յողորմիս յիշեցէք ամէն»։ 8բ էջի խորանի հիշատակագրութեանը դարձյալ վերաբերում է առաջին էջում հիշվող Եղբայրիկին և բարեբախտաբար ամբողջական է։ Խորանի քիվի վրա գրված է՝ «Եղբայրիկ զհայր Բեխենց վանից յիշեցէք յաղաթս», իսկ կիսախորանի վարդյակազարդի թևերին շրջանաձև՝ «Եղբայրիկ» (նկ. 2)։ Նույն էջի խորանահիմքի երիզին գրված է «[հա]յ[ւ]յ[ւ]տուր եղբայր մեր յիշեցէք ի սուրբ յաղաթս ձեր [աղ]այնմ»։

Սրանք են ձեռագրի խորաններում եղած հիշատակությունները, ուր հանդիպում ենք հինգ անվան. հայր Եղբայրիկ, Վանական կազմող, Սիմեոն քահանա⁴, Տիրացու, խաչատուր։ Թվարկված անուններից, ստացողի հիշատակարանում միայն Սիմեոնին և խաչատուրին ենք հանդիպում։ Այնտեղ առաջինը կոչվում է «պատճառ

գործոյս», այսինքն ձեռագիրը գրել տալու. գնվելու և նվիրելու միջնորդը. իսկ երկրորդը՝ «գործակիցը», այն է՝ օժանդակող այդ գործին։ Հայր Եղբայրիկը ձեռագրի գոչության վայրի, Բեխենց վանքի առաջնորդն է։ Վանական ձեռագրի կազմարարն է, սակայն պետք է կարծել, որ նրա պատրաստած կազմը փոխարինվել է նորով 1569 թ.։ Ավետարանի նորոգման ժամանակն է։

Տիրացուն հավանաբար խորանների ծաղկողն է։ Շատ օրինակներով գիտենք, որ երբեմն խորանները գծագրվում, սակայն չէին գունազարդվում։ Այդ արվում էր վաճառքից առաջ, ըստ գնորդ-ստացողի պահանջի։ Տիրացուի «վերստին նորոգեցի» արտահայտությունը երևի չենց խորանների գունազարդման է վերաբերում։

Ավետարանի խորաններում հիշված անձնավորություններից ամենանշանավորը հայր Եղբայրիկն է։ Մեր օրերն են հասել ոչ միայն նրա անվանն ու գործին վերաբերող հիշատակություններ, այլև դիմանկարը՝ կատարված Բեխենց վանքում աշխատած նշանավոր Մարգարե մանրանկարչի ձեռքով 1211 թ.։ «Հաղբատի Ավետարանի» խորաններից մեկի լուսանկարմանում (էջ 9ա) ստեղծելով իր վանքի առաջնորդի դիմանկարը, Մարգարեն կից մակագրել է. «Հայր Եղբայրիկ առաջնորդ սր. ուխտիս յիշեսցիք»⁵։ Եղբայրիկը մասնակցել է նաև Անիում կատարված շինարարական գործերին⁶։

Ընդհանրելով մեր խոսքը հայր Եղբայրիկի գործունեության և Բեխենց վանքի զբաղմունքներին, որն առանձին ուսումնասիրության նյութ է, վերադառնանք Մատենադարանի № 5554 ձեռագրին։ Նրա գրությունն ժամանակը ձեռագրագրությանը նշված է XII դարից։ Սակայն ձեռագրի սկզբնական հիշատակարաններն անթվական են, իսկ նրանցում հիշվող մարդկանց վերաբերյալ որևէ այլ տեղեկություն չունենք։ Միայն հայր

5 Ձեռագրի նորոգման գործը ձեռնարկել է Աստվածատուր կրոնավորը, իսկ իրագործել է Եղիս Մոնոզը։ «Զկազմող սուրբ Ավետարանիս զԵղիս Մոնոզ յիշեցէր ի Քրիստոս, որդի Պեղոս, ի վանս Աղգայոյ, առ Եղբայրս մեր Մրկրտիչ վարդապետն, և նորոգեցար զսուրբ Աւետարանս ի Թվին Ռ և ԺԸ (1569)»։ ՄՄ, ԸՆԹ, № 5554, էջ 6բ։


6 ՄՄ, ԸՆԹ, № 6288, էջ 9ա։ Եղբայրիկի դիմանկարը տե՛ս նաև։ Հին հայկական մանրանկարչություն (այլոսմ, կազմեց Լ. Դուրնովոն)։ Երևան, 1952, նկ. 15։

7 Ս. Գ. Բարիսյանի հայտնաբերած և քարգործ վարպետներ. Երևան, 1963, էջ 142։ Դիվան հայ լիմագրություն. պր. Ա. Երևան, 1966, էջ 7, № 20։


8 Յուդակ ձեռագրագ. հ. Բ, էջ 132։

3 Այս և նախորդ էջում խորանների զարդերի զգալի մասը խոնավության հետևանքով աղաքված է, իսկ Վանականի հիշատակության առաջին հինգ տառերը ծածկված են վերելից ծորած կառմիոնների շեղումով։

4 Խորանների հիշատակագրություններում նշվում են երկու Սիմեոն։ Մեկը Սիմեոն քահանան է (էջ 6ա), որն էր «պատճառ գործոյս», իսկ մյուսը մասնացած «զմիակեց Սիմեոնը» (էջ 7ա), «որ բնակէր յանապատի...»։




Նկ. 1



Նկ. 2



Նկ. 3



Նկ. 4

եղարարին է, որ հիշվում է 1211 թ. («Հաղթանակի Ավետարան») և 1222 թ. (Անիի արձանագրության երկրորդ մեկում): Ուստի կարծում ենք, որ Ավետարանի գրչության ժամանակ պետք է ընդունել XIII դարի առաջին տասնամյակները:

Ձեռագիրը ճոխ գեղարվեստական հարդարանք չունի, սակայն նրա նկարչի արվեստը օժտված է մի շարք հետաքրքիր և ինքնատիպ կողմերով: Ավետարանի ինը խորաններից երկուսը տրամադրված են եվսեբիոսի նամակին: Մնացած յոթը՝ համարադրադի խորաններն են, որոնք բաժանված են երկուական տեքստասյուներին: Խորանները նկարված են նույն սկզբունքով, կառուցվածքով պարզ են և չեն ծանրաբեռնված օժանդակ զարդերով: Խորանն այստեղ չունի ճարտարապետական բաղադրամասեր՝ սյուները գուրդ են խարխախ խոյակներից, չկան լուսանցավարդեր, կենդանական և բուսական պատկերներ և խորանների միակ արտանախազարդերը գլխազարդի վերին երկու ծայրերին և կենտրոնում նկարված, երկու-երեք տարրերից կազմված պարզ արմավազարդերն են: Փաստորեն այստեղ խորանի զարդալին համակարգը հյուսվում է հիմնականում միայն գլխազարդի մեջ և ոչ թե նրա շուրջը: Բայց գլխազարդի մակերեսի զարդալին հագեցվածությունը, այնուամենայնիվ, կարողանում է խորանին հանգիստավոր տեսք հաղորդել: Մաղկոզը նկարազարդման համար օգտագործել է անխառն կարմիր, կապույտ, կանաչ, դեղին գույները և երբեմն թխամանուշակադույն երանգ: Ուկի բոլորովին չի գործածել: Ձեռագրի առաջին երեք խորանները վատ են պահպանվել: Խորանների գլխազարդերի հարդարանքը հիմնականում կազմված են երկրաչափական ձևերի (եռանկյուն, շրջանագիծ և այլն) մեջ առնված բուսական ոլորազարդերը և ցողունամոտիվները: Բոլորից շատ (երեք գլխազարդում) օգտագործված է վարդյակների հորինվածքը, ուր ուղղանկյուն գլխազարդի կենտրոնը զբաղեցնում է շրջագծի մեջ նկարված խոշոր վարդակը, իսկ նույնիսկ և ձախ կողմերում, կիսաշրջանների մեջ, կիսավարդյակներ են: Խորաններից մեկի գլխադարձում (էջ 5ր) կարմիր կորագծերը աղեղում են ուղղանկյան շրջանակները, իսկ կենտրոնում, փոխհատվող ձվաձև զարդերի միջնամասում է նաև շուրջը, մուգ կանաչ խորքի վրա դեղին սույնով արված են նուրբ զծազարդեր: Խորանների գլխազարդերը հանդիպակաց էջերում (բացմասերում) երբեմն նման են, երբեմն՝ ոչ:

Ավետարանում պահպանվել են բոլոր չորս անվանաթերթերը: Դրանք կազմությունը նման են՝

խոշոր գլխազարդ, մեկ զարդագիր տող և կիսախորան: Անվանաթերթերի կիսախորաններն ուղղանկյուններ են, բացառությամբ Ղուկասի ավետարանի անվանաթերթի, որն անկյունավոր տեսք ունի: Բոլորի համար գունալին խորքը կարմիր է: Մատթեոսի ավետարանի կիսախորանը ներկայացնում է ականթազարդերի երկզագծով շրջապատված ուղղանկյան ներսում գույգ քառաթև ծաղիկների շուրջը ազատորեն տարածվող եուրը և ձկուն զարդաձևեր, որոնցով ստեղծված է գեղեցիկ համալսականությունների մի ամբողջ շարք (նկ. 3): Մյուս անվանաթերթերի կիսախորանները ծածկված են ականթազարդերի և ցողունամոտիվ զարդերի բարդ հյուսվածքներով: Գլխազարդը տեղադրված են կիսախորանների տակ: Բոլոր անվանաթերթերի զարդագրերը տարբեր մշակում ունեն, իսկ յուրաքանչյուրում՝ գլխազարդը և նրանով սկսվող զարդագիր տողի տառերը (բացառությամբ Մարկոսի անվանաթերթի) ունեն նման զարդարվածություն: Հատկապես գրավիչ են սյացիկ «Գ» և պարզ շղթայա՝ չե հյուսվածքով «Ո» գլխազարդեր:

Ձեռագրի գեղարվեստական հարդարանքի կական մասն են կազմում տեքստում եղած լուսանցազարդերը: Վերջիններիս հատուկ է պարզությունն ու բնականությունը: Դրանք հիմնականում ներկայացնում են թույլ ռեալիստիկ բուսական զարդեր՝ կանաչ տերևներով և կարմիր պտուղներով ձյուղերի ու ծաղիկների պատկերներով: Նրանցից շատերը նկարված են ուղղակի ծաղկամաններով (օրինակ, էջ 39ա, 39բ, 30ա, 96բ, 111բ, 113ա, 114ա, 115բ, 118ա և այլն): Ավետարանն ունի 136 փոքր լուսանցազարդ: Դրանց մեջ պետք է առանձնացնել կենդանիների երկու զոդերիկ պատկերները. մեկը թռչուն է (էջ 11ա), մյուսը՝ ձուկ (էջ 274բ) (նկ. 4): Վերջինիս պատկերին հանդիպում ենք նաև Հուդեա տի Ավետարանում, որտեղ ձուկ բռնած երիտասարդի պատկերի մոտ նկարիչ Մարգարեն մակադրել է. «Շերանիկ օտնի գուս ձուկն ուր»¹⁰: Եթե նկատի ունենանք Բեխենց վանքի դերքը, որտեղ մերձ էր Ախուրյան գետին, գտնվում էր քաղաք տանող կամրջից և «Միլենց Մարգարի» կոչվող բարպասից ոչ հեռու¹¹, ապա ավելի պարզ կդառնա, թե ինչու էր այդ գեղեցիկ ձուկը սիրված տեղի նկարիչների կողմից:

Մայրտոցի տնվան Մատենադարանի № 555¹² ձեռագիրը չի գրվել ստացողի պատվերով, այլ

¹⁰ ՄՄ, ձեռ. № 6288, էջ 8բ, Հայկական մանրանկարչություն (այլում). Երևան, 1967, նկ. 18 և այլուր:

¹¹ Թ. Թորոմանյան. Նյութեր հայկական ճարտարապետության պատմության. Երևան, 1948, էջ 185:

¹² Անվանաթերթերը հետևյալ էջերում են՝ Մատթեոս՝ էջ 10ա, Մարկոս՝ էջ 85բ, Ղուկաս՝ էջ 132ա, Հովհաննես՝ էջ 212բ:

Ստեղծվել է վաճառքի նպատակով, այդ երևում է և՛ գեորդ-ստացողի հիշատակարանից (ուր ոչ մի խոսք չի ասվում գրիչի, ծաղկողի, գրչության վայրի և ժամանակի մասին), և՛ այն բանից, որ ավարտվելուց հետո Ավետարանում գլխավոր հիշատակարան չի գրվել՝ այլ տեղ է թողնվել որպեսզի այդպիսին գրվի վաճառքից հետո՝ Ստեղծմանը մասնակցողները իրենց անունները գրել են տվել խորանների սյուների, երիզների և քիվերի վրա՝ անգամ գլխադարձերի վարդապետների մեջ, այդ ձևով հիշվելու համար։ Ավետարանի դիրք սովորական բոլորդիր չէ, այլ ավելի շուտ բոլորգրախառն գրչագիր։ Այդ գրատեսակով գրելն ավելի արագ և հեշտ էր։ Սույն ձևադիրը նախատեսված է եղել քաղաքային, միջին և կամուտ ունեցող բնակչի համար, ուստի թանկ նյութերով և շքեղորեն չի պարզարվել։ Կային հատուկ մարդիկ, որոնք զբաղվում էին ձևադիրների օտարմամբ (իրացմամբ)։ Ավետարանի հիշատակարանում և խորաններում հիշվող Սիմեոն քահանան հենց այդ միջնորդն է, որին, ինչպես տեսանք, ստացողը կոչում էր «պատճառ գործույն»։ Ստեղծված լինելով մի վանքում, որ նկարագրվել է «Հաղբատի Ավետարանը», այս ձևադիրը, դատելով նրա գեղարվեստական հարդարանքից, հավատարիմ է Բիսինց վանքի մանրանկարչական դպրոցում գերիշխող բնակունության և ուսուցիչի ոգուն։

Հետաքրքրություն է ներկայացնում ձևադիր խորանների գլխադարձերում Սիմեոն քահանա և Նորայրիկ անունների հիշատակման ձևը։ Անուն-

ները գրված են վարդապետների թեքերին, մեկական տառերով, շրջանաձև։ Անվան հիշատակման ճիշտ նույն սկզբունքին հանդիպում ենք Անիի ճարտարապետական կոթողներից մեկում, որը աշխարհիկ կառույց է, հայտնի՝ Սաղաթ պալատ։ Կայմանական անունով, նրա շրջանաձև տառաձև ձև զարդասալիկներից մեկի թեքերին, դարձյալ մեկական տառերով և շրջանաձև գրված «Սարգիս»¹² հիշատակության հիման վրա։

Սիջնադարյան քաղաքային բարձր մշակույթ ունեցող Անի քաղաքից մեծ օրերը հասած ձևադիրը եզակի են։ Ըստ արժանվույն դասվելով այդ ձևադիրների շարքը, Մատենադարանի № 5554 Ավետարանը որոշակիորեն հարստացնում է մեր գիտելիքները Անիի գրչության զարգացման և մասնավորապես Բիսինց վանքի գրչատան վերաբերյալ։ Այն իր համեստ նպատակն է բերում Անիի արվեստի գանձերի վերահաման կարևոր գործին։

Կ. Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

¹² I. М а р р. Ани. Книжная история города и раскопки на месте городища. М.—Л., 1934, илл. 102. Դիվան հայ վիճագրության, ար. Ա, № 195, էջ 65։ Ուսումնասիրողները Սաղաթին կամ կառուցող վարպետ, կամ պալատ-հյուրանոցի տեր են համարում։ Տե՛ս Թ. Հակոբյան, Անիի պատմություն, հ. Բ, Երևան, 1982, էջ 252։

ПЕРЕПЛЕТ АРМЯНСКОЙ РУКОПИСИ ИЗ СОБРАНИЯ ЭРМИТАЖА (Vз—765)

В апрельском номере за 1880 г. ежемесячника «Арагат», в рубрике «Национальное обозрение» напечатано следующее сообщение: «По случаю двадцатилетия воцарения государя императора его преосвященство католикос с поздравительным письмом преподнес его величеству старинную армянскую рукопись—святое Евангелие, хорошо сохранившееся, красиво написанное на пергамене и иллюстрированное. Рукопись считается XII или XIII века»¹. Далее дается описание рукописи. Речь в заметке шла о преподнесении католикосом всех армян Геворгом IV Александру II армянского четве-

роевангелия, ныне хранящегося в Особой кладовой отдела Востока Эрмитажа².

Этот интересный памятник опубликовала Т. А. Измайлова. Дав детальное описание рукописи и украшающих ее страницы десяти хоранов, шестнадцати сюжетных миниатюр и нескольких десятков маргиналов и сопоставив ее с близкими аналогиями: Четвероевангелие 1350 г. (Иерусалим, № 3435), Евангелие 1655 г. (Матенадаран, № 9433), Четвероевангелия Болонского университета (№ 3290) и парижской Национальной библиотеки (№ 21), Гомилли XVII в. Венских мхитаристов (№ 986),—она убедительно доказала, что эрмитажный кодекс «является

¹ «Արաթ»։ 1880, № 4, էջ 174։ Датировка рукописи XII—XIII вв. оказалась ошибочной.

¹⁵ «Հանգիս», № 4

² ГЭ, отдел Востока, инв. № Vз—765. Размеры 15×11 см. Сохранность хорошая.